

Հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանների համ (68 ժամ, շաբաթական 2ժամ)

Դասընթացի
ընդհանուր
նկարագրությունը

12-ամյա դպրոցի համակարգում հիմնական դպրոցը (7- 9-րդ դասարաններ) պետք է ապահովի կրթվածության այն նվազագույն մակարդակը, որն անհրաժեշտ է ժամանակակից հասարակության անդամնին: Այս տեսանկյունից, նշված դասարաններում ֆիզիկայի դասընթացը չի կարող դիտվել սոսկ որպես ֆիզիկան ավելի բարձր դասարաններում խորությամբ ուսումնասիրելու համար առաջին՝ նախապատրաստական աստիճան, ինչպես նախկինում էր: Ֆիզիկայի դասընթացի առջև բոլորովին նոր խնդիրներ են դրվում:

Նեկայացվող ծրագիրը իր խնդիրներով, դասապրոցեսի կազմակերպման ձևով և ուսուցման արդյունքների ստուգման համակարգով որոշակիորեն տարբերվում է եղածներից:

Ծրագիրը հետապնդում է հետևյալ նպատակները.

- աշակերտներին սովորեցնել ինքնուրույն գիտելիքներ կուտակելու հմտություններ;
- օգնել սովորողներին ինքնուրույն գործնական – հետազոտական աշխատանքի միջոցով յուրացնել բնության ճանաչման գիտական մեթոդները;
- աշակերտների մոտ ձևավորել բնագիտական - տրամաբանական մտածողություն;
- հասնել նրան, որ աշակերտը կարողանա ֆիզիկան ուսումնասիրելիս յուրացրած գիտական մտածողության տարրերը (դասկարգում, մասնատում, մոդելավորում, ինդուկցիա, դեդուկցիա, համանմանություն, համաչափություն և այլն) հաջողությամբ կիրառել կյանքի այլ ոլորտներում տարաբնույթ խնդիրներ լուծելիս;
- աշակերտների մոտ ձևավորել տեսական և գործնական այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն նրան կյանքում հանդիպող անձանոթ երևույթները և իրադրությունները ճիշտ վերլուծել և համապատասխան լուծումներ գտնել;
- սովորողների մոտ ձևավորել բնության մասին գիտական, ամբողջական պատկերացում;
- սովորեցնել խմբի ներսում համագործակցել իր դասընկերների հետ և արդյունավետ, առանց կոնֆլիկտների աշխատել:

Թվարկված նպատակները դասընթացի առջև դնում են հետևյալ խնդիրները.

1. Ֆիզիկայի դասընթացի հենքի վրա սովորողների մոտ ձևավորել բնագիտական մտածողության հիմնական տարրերը՝ դասակարգելու, մասնատելու, մոդելավորելու, ընդհանրացնելու, հիպոթեզներ առաջադրելու, համանմանություններ գտնելու, համաչափություններ հայտնաբերելու հմտություններ,
2. սովորողների մոտ մշակել տարբեր ձևերով (խոսքային՝ բանավոր և գրավոր, գրաֆիկական, աղյուսակային, բանաձևային, սխեմաներով, նկարներով և այլն) կոդավորված ինֆորմացիան վերծանելու և ցանկացած ձևով կոդավորելու հմտություններ,

3. աշակերտներին ծանոթացնել ֆիզիկայի հիմունքներին և նրա հիմնական հասկացություններին, ձևավորել որոշակի պատկերացում ֆիզիկական օրենքների և տեսությունների նասին, սովորեցնել տեսնել այդ օրենքների կիրառությունները կյանքում;
4. ձևավորել փորձարարական հմտություններ՝ օգտվել գործիքներից և տարրեր ֆիզիկական սարքերից, նախագծել ֆիզիկական փորձը, հավաքել համապատասխան սարքավորումը և իրականացնել փորձը;
5. կարողանալ բազմապիսի չափիչ սարքերի օգնությամբ չափել ֆիզիկական մեծություններ, որոշել չափման բացարձակ և հարաբերական սխալները: Չափումների արդյունքները ներկայացնել առյուսակների, գրաֆիկների և մաթեմատիկական բանաձևերի տեքով:
6. ուսումնասիրվող երևույթի բացատրության համար կարողանալ հիպոթեզ առաջարկել, դրա հիման վրա անել տրամաբանական կառուցումներ և կանխագուշակել որոշակի նոր արդյունքներ: Սպասվելիք արդյունքները կարողանալ ստուգել նոր փորձերով:
7. սովորողների մոտ ձևավորել խմբում աշխատելու, ուսուցման պրոցեսում ընկերների հետ համագործակցելու հմտություններ:

Սովորողին
ներկայացվող
պահանջներ

Ծրագիրը հաջողությամբ յուրացնելու համար սովորողից պահանջվում է հետևյալ նախնական պատրաստվածությունը.

- հայերեն լեզվով վարժ կարդալու, կարդացած նյութից հիմնականը առանձնացնելու և այն բանավոր ու գրավոր վերաբերելու հմտություններ;
- կարողանալ համեմատել ամբողջ դրական և բացասական թվերը, դրանց հետ կատարել թվաբանական գործողություններ;
- կարողանալ հասրակ և տասնորդական կոտորակների հետ կատարել թվաբանական գործողություններ, բաղդատել այդ կոտորակները;
- կարողանալ լուծել հանրհաշվական պարզագույն հավասարումներ ($ax+b=0$; $b=x/a$; $b=a/x$ և այլն);
- ծանոթ լինել պարզագույն երկրաչափական պատկերներին՝ ուղիղ գիծ, շրջանագիծ, եռամկյուն, քառամկյուն, զուգահեռագիծ: Իմանալ դրանց հիմնական հատկությունները;
- կարողանալ դիտել երևույթը, առանձնացնել երևույթի հիմնական կողմերը, նկարագրել դրանք:

Աշակերտը պետք է տանը ունենա համակարգիչ և ինտերնետ կապ,

Սովորողների
գործունեության
հիմնական ձևերը

1. Սովորողների ուսումնական գործունեության հիմնական ձևը հատուկ կազմված առաջադրանքներով ինքնուրույն, փորձարարական, հետազոտական աշխատանքն է:
2. Առանձին դեպքերում կիրառվում է դասի կզմակերպան լեկցիոն, խմբային քննարկումների և այլ ձևեր:
3. Ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացում և նախագծերի պաշտպանություն:

Ստուգման և
գնահատման
կարգը

Կիրառվում է աշակերտների գիտելիքների ստուգման և գնահատման հետևյալ ձևերը:

1.(0,2) բանավոր հարցում: Ուսուցիչը աշակերտի ստացած գիտելիքների մասին գաղափար է կազմում դասապրոցեսում նրա կատարած աշխատանքին հետևելով, աշխատանքի ընթացքում նրա հետ բազմապիսի հարցերի քննարկման արդյունքում: Գնահատականը գրանցվում է աշակերտի աշխատանքային տետրում և ուղեկցվում է համապատասխան մեկնաբանությամբ,

2.(0,2) գործնական (լաբորատոր) աշխատանքներ և փորձարարական սարքերի ինքնուրույն պատրաստում:

3.(0,2) թեմատիկ ամփոփիչ թեստեր:

4.(0,3) կիսամյակային ամփոփիչ թեստեր:

5.(0,1) ինքնուրույն հետազոտական աշխատանքներ և տարբեր նախագծերի իրականացում:

Կիսամյակային վերջնական գնահատականը հաշվում է հետևյալ բանաձևով

$$\text{ԿԳ} = 0,2\text{Բ} + 0,2\text{Գ} + 0,2\text{ԹԲ} + 0,3\text{ԿԲ} + 0,1\text{Հ}$$

Բ – բանավոր հարցումների արդյունքում ստացած գնահատականների միջինն է,

Գ – գործնական աշխատանքների համար ստացած գնահատականների միջինը,

ԹԲ – թեմատիկ ամփոփիչ թեստերի կամար ստացած գնահատականների միջինը,

ԿԲ – կիսամյակային ամփոփիչ թեստի համար ստացած գնահատականը

Հ – հետազոտական աշխատանքների և նախագծերի իրականացման համար ստացած գնահատականների միջինը

Կապը այլ
առարկաների
հետ

Ֆիզիկայի ուսուցման ընթացքում օգտագործվում են մաթեմատիկայից աշակերտների ունեցած տարաբնույթ գիտելիքներ և հմտություններ, որոնց հիմնական մասը նշված են սույն ծրագրի «Սովորողին ներկայացվող պահանջները» բաժնում: Մյուս կողմից, ներկայացվող ծրագիրով ֆիզիկայի դասերին աշակերտը նախնական գիտելիքներ է ստանում մի շարք մաթեմատիկական հասկացությունների մասին (հաստատում և փոփոխական մեծություններ, կախվածություն մեծությունների միջև, ֆունկցիաներ, գրաֆիկներ, ուղղիղ համեմատական և գծային կախվածություն, վեկտորական մեծություններ և այլն): Այսպիսի սերտ կապը թույլ է տալիս նախատեսել և անցկացնել բազմաթիվ համակցված դասեր:

Ֆիզիկայի ուսուցման պրոցեսում խիստ կարևորվում է ժամանակակից ՏՀՏ-ների կիրառումը: Համակարգիչը դարձել է ուսուցման կազմակերպման հիմնական միջոց: Այն օգտագործվում է.

- նոր նյութի ուսումնասիրության ժամանակ (նոր նյութը աշակերտը յուրացնում է «**Открытия физики 2.5**» մուլտիմեդիային դասընթացի

Ուսումնական
ճանփորդություններ

- ինտերակտիվ մոռելների հիման վրա մեր կողմից կազմված հատուկ առաջադրանքների կատարման միջոցով);
- համակարգչային լաբորատոր աշխատանքները կատարելիս;
 - նշված դասընթացում զետեղված խնդիրների լուծումները համակարգչային փորձերով ստուգելիս;
 - տարբեր թեմաների վերաբերյալ համակարգչային ներկայացումներ նախապատրաստելիս և ցուցադրելիս;
 - ինտերնետում հանդիպող տարատեսակ թեսթերի հետ աշխատելիս:
Մի քանի թեմաների (Այութի կառուցվածքը, հոսանքը հեղուկներում, էլեկտրոլի, ատոմի կառուցվածքը) սերտորեն կապված են քիմիայից աշակերտների ունեցած գիտելիքների հետ:
Ֆիզիկայի ներկայացվող ծրագրով նախատեսվում է ուսումնական էքսկուրսիաներ:
- 7-րդ դաս. • Բյուրականի աստղադիտարան:
- Բյուրեղավանի ապակե տարաների գործարան:
 - Որևէ մեխանիկական գործարան:
 - Շինհրապարակ:
- 8-րդ դաս. • Քիմիոէլեկտրոկայան:
- Զերմոէլեկտրոկայան:
 - Օդերևութաբանական կայան:
 - Որևէ մեխանիկական գործարան:
- 9-րդ դաս. • Էլեկտրոմեխանիկական գործարան;
- Երևանի ֆիզիկայի ինստիտուտ;
 - Մեծամորի ատոմակայան;
 - Քանրապետական հիվանդանոց:

Գիտելիքների
գործնական
կիրառություններ

1. Գիտական մտածողության տարրերը, որոնք յուրացնում է սովորող ֆիզիկան ուսումնասիրելիս նա կարող է հաջողությամբ կիրառել կյանքի ցանկացած այլ ոլորտներում:
2. Կկարողանա վերլուծել հանդիպող անձանոթ երևույթ, գտնել դրա հնարավոր բացատրությունը:
3. Կկարողանա արդյունավետ աշխատել ցանկացած կոլեկտիվում, հաջողությամբ հաղթահարել աշխատանքի ընթացքում ծագող կոնֆլիկտները:
4. Ստանալով սովորելու որոշակի հմտություններ, հետագայում ինքնուրույն կարող է շարունակել իր հետագա կրթության գործը:
5. Կկարողանա առօրյա կյանքում անվտանգ շահագործել ռադիո և հեռահաղորդակցության այլ միջոցներ, տրանսպորտային միջոցներ և էլեկտրասարքավորումներ:
6. Կկարողանա տալ շրջակա միջավայրի աղտոտվածության՝ մարդու օգանիզմի վրա թողած ազդեցության ինքնուրույն վերլուծություն և

գնահատում, էկոլոգիական պրոբլեմներին սեփական մոտեցումներ մշակել:

Ուսումնական
ձեռնարկներ,
կայքեր, այլ
նյութեր

1. Ե.Ղազարյան և ուրիշներ, «Ֆիզիկա 7», «Ֆիզիկա 8», «Ֆիզիկա 9»
2. Ս.Վ.Գրոմով. Ն.Ա.Ռոդինա «Ֆիզիկա 7» ; «Ֆիզիկա 8», «Ֆիզիկա 9»
3. Վ.Ի.Լուկաշիկ «Ֆիզիկայի խնդիրների ժողովածու 7-8 դաս. համար» . Օգտագործվող ինտերնետային կայքերը նշված են հաջորդ բաժնում
- 6.Գ.Մխիթարյան «Ֆիզիկայից գիտելիքների ստուգման
առաջադրանքներ», մաս 1, մաս 2

7-րդ դասարան
 (68ժամ; շաբաթական 2ժամ)

Թեմայի համարը	Թեմայի անվանումը	Գործնական աշխատանքներ	Կոմպյուտորային առաջադրանքներ
1.(17Ժ)	Բնության ուսումնասիրության գիտական մեթոդները: Չափումներ: Բնությունը և ֆիզիկան: Ֆիզիկական երևույթների դիտումները և դրանց նկարագրությունը: Ֆիզիկական փորձեր: Ֆիզիկական մեծություններ և դրանց չափումները: Երկարությունների չափումը: Չափման բացարձակ սխալը: Մակերեսների չափումները: Կինեմատիկա: Մարմնի դիրքի որոշումը տարածության մեջ: Հաշվարկման մարմին: Մեխանիկական շարժում: Շարժման հարաբերականությունը: Նյութական կետ Շարժման հետագիծ, ճանապարհ և տեղափոխություն: Նախնական պատկերացումներ վեկտորական մեծություններ մասին (տեղափոխության օրինակով): Վեկտորական մեծությունների գումարումը: Հավասարաչափ շարժում: Արագություն: Արագության միավորը: ճանապարհի կախումը ժամանակից: Հաստատուն և փոփոխական մեծություններ: Առնչություններ փոփոխական մեծությունների միջև: Երկու փոփոխական մեծությունների միջև եղած կախվածության պատկերումը աղյուսակների, բանաձևերի և գրաֆիկների օգնությամբ: Հավասարաչափ շարժման	<ol style="list-style-type: none"> Դիտել տարբեր ֆիզիկական երևույթներ (թեք ճռով գնդիկի գլորվելը, ճոճանակի տատանումները, ջրի եռալը, էլեկտրական կայծը, մագնիսների փոխազդեցությունը, լույսի անդրադարձումը) և որքան կարելի է մանրամասն նկարագրել: ա. «Երկարությունների չափումը»; բ. «Մակերեսների չափումը»; <ol style="list-style-type: none"> Շարժվող գնդիկի հետագիծը: Մարմնի անցած ճանապարհի չափումը: <ol style="list-style-type: none"> Հավասարաչափ շարժման դեպքում ճանապարհի և ժամանակի առնչության ուսումնասիրումը: 	<ol style="list-style-type: none"> Նախապատրաստել կոմպյուտերային ներկայացումներ. -Հնում օգտագործվող չափման միավորները: -Մակերեսի չափումը վանդակների մեթոդով <ol style="list-style-type: none"> ինտերակտիվ մոդելը. «Открытая физика 2.5 ч. 1» <ol style="list-style-type: none"> մոբելներ «Открытая физика 2.5 ч. 1» 1.3; 1.4; 1.5; 1.6; 1.7; 1.8 և 1.9:
2.(13Ժ)			

3.(12 d)	<p>պատկերումը գրաֆիկների օգնությամբ: Արագությունը որպես վեկտորական մեծություն: Արագության ուղղությունը:</p> <p>Դիմամիկայի օրենքները: Իներցիայի երևութը: Նյուտոնի 1 օրենքը: Փոխազդեցություն: Զանգված՝ մարմնի իներտության չափ: Զանգված: Զանգվածի չափումը: Նյութի խտություն: Խտության չափումը: Ուժերի համագոր: Մի ուղղով ուղղված ուժերի գումարումը: Մարմնի դեֆորմացիա: Մարմինների դեֆորմացիաների տեսակները: Առաձգականության ուժ: Դուկի օրենքը: Կոշտություն: Ուժաչափ: Մարմնի կշիռ: Շիման ուժեր: Դադարի շիման ուժ. ուժի մեծությունը, ուղղությունը, առավելագույն արժեքը: Սահքի շիման ուժ: Շիման գործակից: Գլորման շիման ուժ: Շիմումը բնության մեջ և տեխնիկայում;</p>	<p>1. «Մի քանի հետաքրքիր փորձեր մարմինների փոխազդեցության վերաբերյալ»: 2...«Ծավալների չափումը»; 3 . «Զանգվածի չափումը»; 4. «Խտություն»: 5. Ուժաչափի աստիճանավորումը և ուժերի չափումը: 1. ա. «Դուկի օրենքը: Զապանակի կոշտությունը» բ. «Մարմնի կշիռ»</p> <p>«Շիման ուժեր»-լաբորատոր աշխատանքներ:</p>	<p>1. ինտերակտիվ մոդելները. «Открытая физика 2.5 ч. 1» 1.10; 1.14; 1.15; 1.17; 1.18 և 1.19</p> <p>1. «Ուժի աշկատանքի հաշվումը» համակարգչային գործնական աշխատանքը: «Открытая физика 2.5 ч. 1», մոդել 1.20</p>
----------	---	--	--

3.(4d)	<p>Նյութի կառուցվածքը.Ատոմներ և մոլեկուլներ:Դիֆուզիա:Մոլեկուլների փոխազդեցությունը;Մարմնի ջերմաստիճան,ջերմաչափ: Նյութի ագրեգատային վիճակներ:</p>	<p>1. Դիֆուզիայի երևույթը: Մոլեկուլներ 2. Յարկադրական դիֆուզիայի դիտումը:</p>	<p>1. Ուսումնասիրել բրոռումյան շարժումը: Открытия физики 2.5 ч. 1», մոդել 3.1 2. Ուսումնասիրել գազի մոլեկուլների քառային շարժումը: Открытия физики 2.5 ч. 1», մոդել 3.2 3. Ուսումնասիրել գազերում ընթացող դիֆուզիայի երևույթը: Открытия физики 2.5 ч. 1», մոդել 3.3</p>
4.(16d)	<p>Ճնշում</p> <p>Ճնշում և ճնշման ուժ:Ճնշման միավորները: Գազի ճնշումը: ճնշման հաղորդումը գազերում և հեղուկներում:</p>	<p>1. Ճենարանի վրա մարմնի գործադրած ճնշման կախումը ազդող ուժից և հենման մակերեսի մեջությունից: 2. Ուստինե փուչիկի ուռչելը օդահան պոմախ տակ:</p>	<p>1. Լուծիր առաջադրված խնդիրը և լուծումը սոուլգիր համակարգչային փորձի միջոցով: «Открытия физики 2.5 ч. 1», մոդել 1.16</p>
	<p>Պասկալի օրենքը: Հեղուկի ճնշումը անորի պատերին և հատակին: Յաղորդակից անոթներ: Յաղորդակից անոթներում հեղուկի հավասարակշռության պայմանները: Զրաբաշխական մամլիչ: Մթնոլորտային ճնշում: Տորիչելիի փորձը: Բարոնմետր - ամերիկա: Մթնոլորտային ճնշման կախումը բարձրությունից: Հեղուկի և գազի ազդեցությունը իր մեջ ընկողման մարմնի վրա: Դուրս հրող ուժի առաջացումը: Արքիմեդյան ուժ, մեջությունը, ուղղությունը:</p>	<p>: 3. ճնշման հաղորդումը հեղուկներում և գազերում: 4. ճնշման կախումը հեղուկի սյան բարձրությունից: 5. ճնշման կախումը հեղուկի խտությունից: 6. Մթնոլորտային ճնշումը հաստատող փորձեր: 7. «Մարմինների լողալու պայմանները» փորձնական առաջադրանքը:</p>	<p>. «Մարմինների լողալու պայմանները» փորձնական առաջադրանքը: մթնոլորտային ճնշումը հաստատող փորձեր: ճնշման կախումը հեղուկի խտությունից: ճնշման հաղորդումը հեղուկներում և գազերում: ճնշման կախումը հեղուկի սյան</p>

4.(6ժ)	<p>Մարմինների լողալու պայմանները: Օդագնացություն</p> <p>Մեխանիկական աշխատանք: Աշխատանքի միավորները: Հզորություն: Հզորության միավորները: Լծակ: Մոմենտների կանոնը: Պարզ մեխանիզմներ՝ ճախարակ, կարապիկ թեք հարթություն: Օգտակար և լրիվ աշխատանք: Օգտակար գործողության գործակից:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Լծակի հավասարակշռության պայմանի ստացումը: 2. Փորձով համոզվել, որ շարժական ճախարակը ուժի մեջ երկու անգամ շահում է տալիս: 3. Տրված առաջադրանքների օգնությամբ ուսումնասիրել մեխանիկական էներգիա թեման: 4. Ծանրության ուժի աշխատանքի հաշվումը: 5. Հորիզոնական հարթությամբ մարմինը տեղափոխելիս շիման ուժի աշխատանքի հաշվումը: 6. Փորձով համոզվել, որ շարժական ճախարակը օգտագործելիս աշխատանքի մեջ շահում չենք ունենում: 7. Թեք հարթությամբ մարմինը բարձրացնելիս օ.գ.գ.-ի հաշվումը: 	<ol style="list-style-type: none"> 1. Ուսումնասիրել մեխանիկական էներգիայի մի տեսակից մյուսին փոխակերպումը: Открытия физика 2.5 ч. 1», մոդել 1.21
--------	--	--	--

Կազմեց՝ Գ.Միհթարյան

8-րդ դասարան

(68Ժամ, շաբաթական 2Ժամ)

Թեմայի համարը	Թեմայի անվանումը	Գործնական աշխատանքներ	Կոմպյուտորային առաջադրանքներ
1.(13ժ)	Կինեմատիկա Անհավասարաչափ շարժում: Միջին արագություն: Տաճապարիը անհավասարաչափ շարժման դեպքում: Ֆիզիկական մեծության փոփոխությունը: մեծության փոփոխության արագություն: Հավասարաչափ արագացող շարժում: Արագացում: Արագացման միավորը: Արագացումը որպես վեկտորական մեծություն: Արագացման ուղղությունը: Արագությունը և ճաճապարիը հավասարաչափ արագացող շարժման դեպքում: Հավասարաչափ արագացող շարժման գրաֆիկական պատկերումը: Ազատ անկում: Ազատ անկման արագացում: Հավասարաչափ շրջանագծային շարժում:	1. Լարովի խաղալիք ավտոմեքենայի շարժման միջին արագության որոշումը: 2. Թեք հարթությամբ մարմնի շարժման ուսումնասիրումը: 3. Թեք հարթությամբ շարժվող մարմնի արագացման կախումը թեքության անկյունից: 4. Ազատանկման արագացման որոշումը ընկնող գնդիկի օգնությամբ: 5. Պտտական շարժումների դիտումներ: Պտտման պարբերության և հաճախության չափումը:	Համակարգչային լաբորատոր աշխատանք. << Ազատ անկման արագացման որոշումը>>:
2(12 ժ)	Դինամիկա Նյուտոնի I օրենքը: Նյուտոնի II օրենքը: Նյուտոնի III օրենքը: Ինպուլս: Ինպուլսի պահպանության օրենքը: Ուսակտիվ շարժում: Էներգիա: Էներգիայի տեսակները: Պոտենցիալ և կինետիկ էներգիաներ: Մեխանիկական էներգիայի փոխակերպումը մի տեսակից մյուսին: Մեխանիկական էներգիայի պահպանության օրենքը: Շարժվող ջրի և քամու էներգիայի օգտագործումը:	1. Նյուտոնի II օրենքի ուսումնասիրումը: 2. Նյուտոնի III օրենքի ուսումնասիրումը:	1. Կատարել կոմպյուտորային գործնական աշխատանքներ օգտագործելով հետևյալ ինտերակտիվ նոդելները. « Открытия физики 2.5 ч. 1 » 1.10; 1.14; 1.15; 1.17; 1.18 և 1.19: 3. Կատարիր «Պահպանության օրենքները մեխանիկայում» համակարգչային գործնական աշխատանքը: Открытия физики 2.5 ч. 1», մոդել 1.22

3.14ժ	<p>Ներքին էներգիա: Նյութի կառուցվածքը: Ներքին էներգիայի փոփոխման եղանակները՝ աշխատանք և ջերմափոխանակում:</p> <p>Զերմահաղորդականություն, կոնվեկցիա, ճառագայթում: Զերմաքանակ: Տեսակարար ջերմունակություն: Մարմնի տաքացման ժամանակ կլանված և նրա հովացման դեպքում անջատված ջերմաքանակի հաշվումը:</p> <p>Նյութի ագրեգատային վիճակները: Բյուրեղային մարմինների հալումն ու պնդացումը: Հալման (պնդացման) ջերմաքանակ: Հալման տեսակարար ջերմություն:</p> <p>Գոլոշիացում և խտացում: Եռում: Եռման ջերմաստիճան: Շոգեգոյացման տեսակարար ջերմություն:</p> <p>Այրման ժամանակ անջատվող ջերմաքանակը: Այրման տեսակարար ջերմություն:</p> <p>Լրիվ էներգիայի պահպանության օրենքը:</p> <p>Զերմոդինամիկայի առաջին օրենքը:</p> <p>Զերմային շարժիչներ: Զերմային շարժիչները: Շոգեմեքենայի և ավտոմեքենայի հայտնագործումը: Ներքին այրման շարժիչներ: Շոգետուրբին:</p>	<ol style="list-style-type: none"> Կատարիր նշված գործնական առաջադրանքները. ա. «Դիֆուզիայի երևույթը: Մոլեկուլներ» բ. «Մարմինների ջերմային ընդարձակումը» Հարկադրական դիֆուզիայի դիտումը: Սխեմայի օգնությամբ ներմուծել ներքին էներգիայի գաղափարը: Աշխատանք կատարելիս մարմինների տաքացման երևույթի դիտումը: Հեղուկներում կոնվեկցիայի դիտումը: Կատարիր «Տաքանալիս (սառելիս) մարմնի կլանած (անջատած) ջերմաքանակի հաշվումը» գործնական առաջադրանքը Հավասար զանգվածներով տարբեր հեղուկներ միևնույն չափով տաքացնելիս անհրաժեշտ ջերմաքանակների համեմատումը: Զերմաքանակների համեմատումը տարբեր ջերմաստիճաններ ունեցող ջրերը իրար խառնելիս: Պինդ մարմնի հալման երևույթի փորձնական ուսումնասիրությունը: Զրի եռման երևույթի ուսումնասիրությունը: Պինդ մարմնի տեսակարար ջերմունակության որոշումը: 	<ol style="list-style-type: none"> Ուսումնասիրիր բրոունյան շարժումը: Открытая физика 2.5 ч. 1», մոդել 3.1 Ուսումնասիրիր գազի մոլեկուլների քառսային շարժումը: Открытая физика 2.5 ч. 1», մոդել 3.2 Ուսումնասիրիր գագերում ընթացող դիֆուզիայի երևույթը: Открытая физика 2.5 ч. 1», մոդել 3.3 Զուրը երեք տարբեր ագրեգատային վիճակներում: Открытая физика 2.5 ч. 1», մոդել 3.17
4.15Ժ	<p>Նյութի ագրեգատային վիճակները: Բյուրեղային մարմինների հալումն ու պնդացումը: Հալման (պնդացման) ջերմաքանակ: Հալման տեսակարար ջերմություն:</p> <p>Գոլոշիացում և խտացում: Եռում: Եռման ջերմաստիճան: Շոգեգոյացման տեսակարար ջերմություն:</p> <p>Այրման ժամանակ անջատվող ջերմաքանակը: Այրման տեսակարար ջերմություն:</p> <p>Լրիվ էներգիայի պահպանության օրենքը:</p> <p>Զերմոդինամիկայի առաջին օրենքը:</p> <p>Զերմային շարժիչներ: Զերմային շարժիչները: Շոգեմեքենայի և ավտոմեքենայի հայտնագործումը: Ներքին այրման շարժիչներ: Շոգետուրբին:</p>	<ol style="list-style-type: none"> Հավասար զանգվածներով տարբեր հեղուկներ միևնույն չափով տաքացնելիս անհրաժեշտ ջերմաքանակների համեմատումը: Զերմաքանակների համեմատումը տարբեր ջերմաստիճաններ ունեցող ջրերը իրար խառնելիս: Պինդ մարմնի հալման երևույթի փորձնական ուսումնասիրությունը: Զրի եռման երևույթի ուսումնասիրությունը: Պինդ մարմնի տեսակարար ջերմունակության որոշումը: 	<ol style="list-style-type: none"> Ուսումնասիրիր գազի մոլեկուլների մոդելում: Открытая физика 2.5 ч. 1», մոդել 3.2 Ուսումնասիրիր գազի մոլեկուլների քառսային շարժումը: Открытая физика 2.5 ч. 1», մոդել 3.3 Զուրը երեք տարբեր ագրեգատային վիճակներում: Открытая физика 2.5 ч. 1», մոդել 3.17
5.14Ժ	<p>Մեխանիկական</p>		

<p>տատանումներ:</p> <p>Ազատ և հարկադրական տատանումներ: Զսպանակավոր ճոճոնակի տատանումների ուսումնասիրումը: Մաթեմատիկական ճոճոնակի տատանումների ուսումնասիրումը: Էներգետիկ փոխակերպումները տատանումների ժամանակ: Մեխանիկական ռեզոնանս:</p> <p>Ալիքներ:</p> <p>Մեխանիկական ալիքներ: Լայնական և երկայնական ալիքներ: Ալիքի երկարություն, տարածման արագություն և պարբերություն: Դրանց միջև եղած կապը: Մեխանիկական ալիքներ:</p> <p>Չայնային ալիքներ: Չայնը տարբեր միջավայրերում: Չայնի բնութագրերը՝ ուժգնություն և մաստիկուլյուն: Տոնի բարձրություն: Արձագանք: Ենթաձայն և անդրաձայն:</p>	<p>1. Լայնական և երկայնական ալիքների առառաջացման և տարածման դիտումներ: 2. Թելավոր ճոճանակի տատանումների ուսումնասիրումը:</p>	
---	--	--

(68ԺԱՄ; շաբաթական 2ԺԱՄ)

Թեմայի համարը	Թեմայի անվանումը	Գործնական աշխատանքներ	Կոմպյուտորային առաջադրանքներ
1.20Ժ	Էլեկտրական երևույթներ Մարմինների էլեկտրականացումը և էլեկտրական լիցք: Էլեկտրացուց; Էլեկտրական լիցքի բաժնելիություն: Ասումի կառուցվածք: Էլեկտրականացման բացարությունը: Լիցքի պահպանության օրենքը: Էլեկտրական դաշտ: Շանթարգել: Էլեկտրականության հաղորդիչներ և անհաղորդիչներ:	<ol style="list-style-type: none"> Տարբեր մարմինների էլեկտրականացման դիտումը: Էլեկտրականացված մարմինների փոխազդեցության դիտումը: Էլեկտրացուցի ուսումնասիրումը 	

Թեմայի համարը	Թեմայի անվանումը	Գործնական աշխատանքներ	Կոմպյուտորային առաջադրանքներ
---------------	------------------	-----------------------	------------------------------

1ա.10ժ	<p>Էլեկտրական հոսանք: Հոսանքի ազդեցությունները: Հոսանքի ուժ:</p> <p>Էլեկտրական հոսանքի աղբյուրներ: Հարեւմ լարման միավորները: Ամպերմետը և վոլտմետրը:</p> <p>Էլեկտրական դիմադրություն: Ունգիստորներ: Օհմի օրենքը շղթայի տեղամասի համար: Էլեկտրական հոսանքի ազդեցությեւնը մարդու վրա: Դիմադրության կախումը հաղորդիչի չափերից, նյութի տեսակից և ջերմաստիճանից:</p> <p>Տեսակարար դիմադրություն: Հաղորդիչների հաջորդական և գուգահեռ միացումները:</p> <p>Էլեկտրական հոսանքի աշխատանքն ու հզորությունը: Զոռու-Լենցի օրենքը: Կարծ միացում: Ապահովիչներ:</p> <p>Կայծակ: Շիկացման լամպ:</p> <p>Էլեկտրական հոսանքը էլեկտրոլիտների լուծույթներում: Էլեկտրոլիզ:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ուսումնասիրել տարբեր տեսակի հոսանքի աղբյուրներ: 2. Գալվանական էլեմենտի կառուցվածքի ուսումնասիրումը: 3. Կատարիր նշված գործնական առաջադրանքները. <ol style="list-style-type: none"> ա. «Պարզագույն էլեկտրական շղթաներ» բ. «Էլեկտրական հոսանքի քիմիական ազդեցությունը» 	<p>Համակարգչային գործնական աշխատանքներ՝ 1.Պարզագույն էլ. շղթաների հավաքում, հաջորդական և գուգահեռ միացումներ:</p> <p>2. Օհմի օրենքի ստուգումը, <Էլեկտրոնիկա> ծրագրի գործածում,</p>
2.7ժ	<h3>Հաստատուն մագնիսներ</h3> <p>Հոսանքի մագնիսական դաշտը: Էլեկտրամագնիսներ: Հեռագրակապ:</p> <p>Մագնիսի փոխազդեցությունը հոսանքակիր հաղորդիչի հետ: Երկու հոսանքակիր հաղորդիչների փոխազդեցությունը:</p> <p>Մագնիսական դաշտ: Մագնիսական դաշտի ազդեցությունը հոսանքակիր հաղորդիչի և դաշտում շարժվող լիցքի վրա: Մագնիսական դաշտի ազդեցությունը հոսանքակիր շրջանակի վրա: Էլեկտրաշարժիչներ: Էլեկտրամագնիսական դաշտ:</p> <p>Էլեկտրամագնիսներ: Ուղղիո: Հեռուստատեսություն: Բջջային հեռախոս, ինտերնետ:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Հաստատուն մագնիսների ուսումնասիրություն 2. մագնիսական դաշտ, մագնիսական գծեր 3. Էլեկտրամագնիսի հավաքումն ու փորձարկումը 4. մագնիսական դաշտի ազդեցությունը հոսանքակիր հաղորդիչի վրա 5. մագնիսական դաշտի ազդեցությունը հոսանքակիր շրջանակի վրա 	
3.13ժ			

	<p>Երկրաչափական օպտիկա:</p> <p>Լույս: Լույսի տարածումը համասեռ միջավայրում: Լույսի անդրադարձումը: Անդրադարձման օրենքը: Դարթ հայելի: Լույսի բեկումը: Բեկման օրենքը: Գաղափար թելքային օպտիկայի մասին: Օդատեսիլ:</p> <p>Ոսպնյակներ: Առարկայի պատկերի կառուցումը ոսպնյակում: Բարակ ոսպնյակի բանաձևը: Ոսպնյակի օպտիկական ուժ: Ոսպնյակի խոշորացում: Աչք և տեսողություն: Կարճատեսություն և հեռատեսություն: Ակնոց: Ֆոտոէֆեկտ: Ֆոտոսինթեզ: Լուսանկարչական ապարատ: Լազերներ:</p> <p>Ասոմի միջուկի կառուցվածքը:</p> <p>Ռեզերֆորդի փորձերը: Ասոմի մոլորակային մոդելը: Ասոմի մոդելն ըստ Բորի: Մասնիկ -ալիք երկակիություն: Ասոմի միջուկի կառուցվածքը: Միջուկային ուժեր: Ասոմի միջուկի տրոհումը: Ռադիոակտիվություն: Ձերմամիջուկային ռեակցիա: Ասոմային էներգետիկայի հեռանկարներն ու պրոբլեմները: Բնապահպանական խնդիրներ: Ռադիոակտիվ ձառագայթման ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: Տարրական մասնիկներ:</p> <p>Աստղագիտություն</p> <p>Աստղագիտությունը բ նրա բաժինները, գործնական նշանակությունը: Աշղարհի երկրակենտրոնը արեգակնակենտրոն համակարգերը; Դիտումները կազմում են աստղագիտության հիմքը; Դամաստեղություններ: Երկնողորտը և նրա հիմնական տարրերը: Կոռորդինատական համակարգեր: Աստղային քարտեզներ: Լուսատուների կուլմինացիաները: Արեգակի</p>	<p>1. Լույսի անդրադարձման երևույթի ուսումնասիրումը: 2. Լույսի բեկման երևույթի ուսումնասիրումը:</p>	<p>Աշխատանք համապատասխան ինտերակտիվ մոդելներով:</p> <p>Ինտերակտիվ մոդելների գործածում:</p>
4.5Ժ			
5.13			

<p>տեսանելի շարժումը: Ժամանակի չափումը: Օրացույց: Արեգակնային համակարգի կառուցվածքը: Մոլորակների տեսանելի շարժումներըն երկնքում: Մոլորակների դասավորությունը մինյանց նկատմամբ: Տիցիուս-Բողեյի օրենքը: Արեգակնային համակարգի մարմինների ֆիզիկական բնութագրերը: Երկնային խմբի մոլորակներ: Նույն մոլորակներ: Թզուկ մոլորակներ: Լուսին: Արեգակի և լուսնի խավարումները: Մակընթացություններ և տեղատվություններ: Գիսավորներ, ասուպներ, երկնաքարեր:</p> <p>Արեգակի ֆիզիկական բնութագրերը, կառուցվածքը, մթնոլորտը, լուսոլորտը: Գրանուլներ, արևաբժեր, ջահեր: Արեգակի ակտիվության պարբերականությունը: Աստղը որպես գազային գնդեր: Աստղերի հեռավորությունների որոշումը: Բացարձակ աստղային մեծություն, լուսատվություն, գույն: Աստղերի տարբեր տիպեր.ցեֆեհիններ, բռնկվող, նոր և գերնոր աստղեր: Բարախչներ : Սև խոռոչներ: Տիեզերքի կառուցվածքը և էվոլյուցիան: Գալակտիկա՝ տեսքը, չափերը, կառուցվածքը և ենթահամակարգերը: Աստղակույտեր: Աստղասփյուռներ: Միզամածություններ և միջաստղային կլանող նյութ: Այլ Գալակտիկաներ դրանց դասկարգումը: Մետագալակտիկա : Յարլի օրենքը: Տիեզերքի առաջացնան Մեծ Պայթյունի վարկածը: Կյանքը և բանականությունը տիեզերքուն:</p>	<p>Ուժեղագույն աշխատանքներ:</p>	
---	---------------------------------	--

Կազմեց՝ Գ.Միհրարյան

